ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով մայիս ամսին

«**Ս. Գրիգոր Լուսաւորիչ**» շքանշանով պարգեւատրվել է.
Սահակ Կարապետյան-Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ

«**Ս. Սահակ-Ս. Մեսրոպ**» շքանշանով պարգեւատրվել է.
Ռոբերտո Մալխասյան-Արգենտինայի թեմ

«**Ս. Ներսես Շնորհալի**» շքանշանով պարգեւատրվել են.
Ռոսիթա Յուսուֆյան-Արգենտինայի թեմ
Խորխե Մյուրեքյան-Արգենտինայի թեմ
Գրիգոր Հայրապետյան-Արգենտինայի թեմ
Վահան սրկ. Պերպերյան-Արգենտինայի թեմ
Ռաֆֆի Սիմոնյան-Արգենտինայի թեմ
Դավիթ Դավիթյան-Արգենտինայի թեմ
Հարություն Սաֆարյան-Արգենտինայի թեմ
Վլադիմիր Ղազարյան-Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ

«**Օրհնության գիր**» են ստացել.
Միխայիլ Չերնիշով-Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ
Տիկնանց համագումար-Կանադայի թեմ
Հոգեւորականաց համագումար-Կանադայի թեմ
Պատգամավորական ժողով-Կանադայի թեմ

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ՋՐՎԵԺԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԸ

Ամեն տարի գեղեցիկ ավանդույթ է դարձել մայիս ամսի առաջին կիրակի օրը բազմաթիվ հավատացյալներ են ուխտի գալիս Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցի քանի որ, 1991թ. մայիսի սկզբին Արարատյան հայրապետական առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի (այժմ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի) օրհնությամբ վերաբացվեց Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցին, եւ այդ օրվանից ի վեր այն համարվեց Ս. Կաթողիկե եկեղեցու ուխտի օր:

2011 թ. մայիսի 1-ին, եկեղեցու վերաբացման 20-ամյակի առթիվ՝ հոգեւոր հովիվ Տեր Կյուրեղ Տալյանի ջանքերի եւ համայնքի հավատավոր ժողովրդի ներդրման շնորհիվ նորակառույց գմբեթը ու զանգակատունը ամբողջական էին դարձրել Ս. Կաթողիկե եկեղեցին: Այդ օրը մատուցվեց Ս. Պատարագ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպս. Քարամյանի կողմից: Սրբազան հայրը իր խոսքում առանձնակի շնորհակալություն հայտնեց համայնքի ժողովրդին եկեղեցու շուրջ իրենց համախմբվածության համար եւ խոսվեց հավուր պատշաճի քարոզ: Սրբազանի ձեռամբ օծվեց նորակառույց եկեղեցու գմբեթի խաչը, Աստվածամոր նկարը: Հրավիրվածներին զարմացրեց այն փաստը, որ Ջրվեժի համայնքը անտեսելով անբարենպաստ եղանակը կարողացավ իր երգ ու պարով, պատշաճությամբ նշել Ս. Կաթողիկե եկեղեցու արդեն ավանդույթ դարձած ուխտի օրը:

Տոնախմբությանը ներկա էր գյուղապետ Ն. Պետրոսյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ: Այդ օրը ջրվեժցիների համար տոնական էր, կազմակերպված հոգեւոր եւ գեղարվեստական միջոցառմանը զուգահեռ ներկաներին բաժանվեց մատաղ՝ կապված Ս. Կաթողիկե եկեղեցու ուխտի օրվա հետ:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻՆ

Մայիսի 4-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն Դանիել Յոհաննեսին՝ ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Մարի Յովանովիչի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ այն կարեւոր ներդրմա-

նը, որ հիմնադրամը կատարում է Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Ի դեմս ՀՄԿ գործադիր տնօրենի Վեհափառ Հայրապետը գնահատանք հայտնեց Միացյալ Նահանգների ժողովրդին եւ բարի արդյունավորում մաղթեց հիմնադրամի աշխատանքներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ վստահություն հայտնեց, որ Հայաստանը կհաղթահարի իր առջեւ ծառացած դժվարություններն ու խնդիրները՝ դրանում մեծապես կարեւորելով հոգեւոր արժեքների վերականգնումը:

Դրն. Դանիել Յոհաննեսն իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար եւ Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ՀՄԿ-Հայաստան ծրագրի իրականացման ընթացքի դիտարկման արդյունքները:

Զրույցի ընթացքում, ի պատասխան հյուրի հարցումների, Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությունը, անդրադարձավ Հայոց Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին եւ դրանց հաղթահարման ուղիներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԱՄԱՐ

Մայիսի 4-ին, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Ճապոնիայում մարտին տեղի ունեցած երկրաշարժի եւ ցունամիի հետեւանքով զոհված հազարավոր մարդկանց:

Արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ինչպես նաեւ թեմական առաջնորդներ, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հոգեհանգստին ներկա էր նաեւ Ճապոնիայի արտաքին գործերի փոխնախարար Հիասի Տոկունագան:

Հոգեհանգստյան արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը «Եղբորից օգնություն ստացած եղբայրը նման է ամուր քաղաքի, նա հզոր ու բարձր է, ինչպես հաստատուն թագավորությունը» (Առակ. ԺԸ 19) բնաբանով խոսք ասաց, որը ներկայացվում է ստորեւ ամբողջությամբ.

«Սողոմոն իմաստունի շուրթերից հազարամյակներ առաջ հնչած այս խոսքը, այսօր էլ իմաստավորված է մեր կյանքում եւ արդիական հնչողություն ունի: Իր ժո-

ղովրդի, պետության եւ մարդկության ճակատագրով անհանգստացած խորագետ ու աստվածուսույց թագավորը բոլոր ժամանակների համար կատարում է փորձառությամբ ամրագրված հաստատում. «Եղբորից օգնություն ստացած եղբայրը նման է ամուր քաղաքի, նա հզոր ու բարձր է, ինչպես հաստատուն թագավորությունը» (Առակ. ԺԸ 19):

Մարդու՝ իր նմանի հետ ունեցած հարաբերությունների խորքերն է բացում մեր առաջ աստվածաշնչյան իմաստությունը: Աստծո կողմից ի սկզբանե մարդն ստեղծվեց որպես արարչագործության եւ հասարակության հետ անքակտելի կապի մեջ եղող էակ եւ դրանց անբաժան մաս: Աստվածային այս ճշմարտությունն է հայտնում մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս իր պատգամով՝ «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Ղուկ. Ժ 27): Մերձավորի, իր նմանի հանդեպ այս սերը առաջին պայմանն է Աստծուն սիրելու եւ Նրա սերը ճանաչելու, քանզի «ով սիրում է Աստծուն, նա պետք է սիրի նաեւ իր եղբորը» (Ա Յովհ. Դ 21),- ասում է առաքյալը: Մարդ էակի մեջ առկա աստվածային պատկերն է, որ մեզ առիթն ու հնարավորությունն է տալիս Աստծուն տեսնելու ամեն մարդու ժպիտի կամ արցունքի, ուրախության կամ տառապանքի, հաջողության կամ աղետի մեջ: Քրիստոնեական վարդապետության այս հիմնադրույթի համաձայն՝ մարդկանց վշտակից եւ խնդակից լինելով ենք դառնում աստվածանման եւ քրիստոսանման:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այսօր միասիրտ ու միախորհուրդ համախմբվել ենք Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում՝ խնկարկելու մեր աղոթքը հազարավոր անմեղ մարդկանց հիշատակին, ովքեր զոհվեցին Ճապոնիայի հյուսիս-արեւելքում մարտի 11-ին եւ հաջորդ օրերին տեղի ունեցած աղետալի երկրաշարժերի ու ցունամիների հետեւանքով: Մեր համատեղ աղոթքն այսօր մեր հավատի ու հավատարմության վկայությունն է քրիստոսավանդ պատվիրանին՝ վշտակցելու եւ մեր զորակցությունը բերելու Աստծո պատկերով ստեղծված մեր եղբայրներին, ովքեր դիմակայում են բնության աղետալի տարերքի ավերածություններին եւ վնասներին: Տառապանքի ու ցավի մեջ միմյանց սատար լինելով եւ մխիթարելով ենք հաստատում մարդուն սիրելու եւ կարիքի մեջ նրան զորակցելու աստվածավանդ մեր կոչումն ու պարտքը եւ ամրագրում մեր բարոյական վարքը:

Այսօր մարդկության համար անհրաժեշտ է այն գաղափարի որդեգրումը, որ Երկիրը մեր ամենքիս տունն է, աստվածակերտ ընտանիքը, որտեղ բնակվող ամեն անհատ՝ անկախ մաշկի գույնից, ազգությունից ու կրոնից, ունի իր իրավունքներն ու պարտականությունները՝ հաղեպ Երկիր մոլորակի մեր մեծ ընտանիքը: Չէ որ մեր Տերն իր խոսքով հաստատում է, թե «երկինքն իմ աթոռն է, եւ երկիրը՝ իմ ոտքերի պատվանդանը» (Եսայի ԿԶ 1): Ուրեմն, աստվածաստեղծ մարդկային մեծ ընտանիքի մեջ ամենքս բարոյական պարտք ու պարտականություն ունենք ձեռք մեկնելու եւ մխիթարելու մեր բոլոր եղբայրներին, ովքեր կրում են աղետի կամ դժբախտության ծանր բեռը:

Ողբերգությունը, ցավն ու կորուստը պատկանելություն եւ սահմաններ չեն ճանաչում: Մեր ժողովուրդն էլ այս գիտակցության ու համոզմունքի դրսեւորման ականատեսը եղավ աջակցություն գտնելով Հայոց Ցեղասպանության օրերին, 1988 թվականի աղետալի երկրաշարժի ժամանակ, երբ Հայաստանին եղբայրաբար օգնության ձեռք մեկնեցին բազմաթիվ երկրներ, որոնց շարքում եւ Ճապոնիան: Հայ ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում ցավի ու նեղության մեջ իրեն սատարած կանգնած անհատներին եւ երկրները: Այսօր, սիրելիներ, երկրաշարժի աղետից տուժած հազարավոր մարդկանց եւ հազարավոր զոհվածների հոգիների համար աղոթքի այս նվիրական պահին գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ ի գլուխ մեծարգո Նախագահ տիար Սերժ Սարգսյանի, եւ բարեպաշտ աշխարհասփյուռ մեր զավակներին, որ եղբայրական օգնություն ցուցաբերեցին Ճապոնիայի ազնիվ ժողովրդին: Մեր օրհնությունն ենք բերում նաեւ բոլոր այն ազնիվ անձանց, ազգերին ու պետական այրերին, ովքեր մարդկային բարոյական պարտքի ասպվածատուր գիտակցումով անմիջապես արձագանքեցին ճապոնացի ժողովրդին օգնելու կոչին: Թող Տերն ամրացնի նրանց բարերար բազուկները եւ միշտ մարդասեր ընթացքի մեջ առաջնորդի նրանց գործերը: Աղոթենք, որ այլեւս երբեք աղետն ու դժբախտությունը չբախեն եւ ոչ մի ժողովրդի դուռը, եւ Տիրոջով զորացած ու ներշնչված մարդասեր սրտերն ու ձեռքերը երբեւէ չպակասեն մարդկային հասարակությունից:

Տիրոջ սերը, շնորհը, ողորմությունը եւ խաղաղությունը թող միշտ լինեն մեզ հետ եւ բոլորի՝ այսօր եւ հավիտյան. ամեն»:

Այնուհետեւ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ հնչեցին հոգեւոր երգեր եւ շարականներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՌԴ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԻՍՏԱՎՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Մայիսի 4-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն ընդունեց ՌԴ դատական պրիստավների դաշնային ծառայության պատվիրակությանը՝ գլխավորությամբ ՌԴ գլխավոր դատական պրիստավ Արթուր Պարֆենչիկովի:

Սրբազան Հայրը ողջունեց պատվիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց դատական պրիստավների դժվարին

ծառայությանը, որը կոչված է հաստատելու եւ իրագործելու արդարադատությունը եւ իրավունքի պաշտպանությունը:

Հանդիպումից հետո պատվիրակությունն այցելեց Մայր Աթոռի թանգարան, ծանոթացավ հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային գանձերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչության հրավերով 2011թ մայիսի 12-ին, Ամերիկյան համալսարանի «Գանաչ քաղաքաշինություն» առարկայի դասախոս՝ Ալեն Ամիրխանյանը ճեմարանում դասախոսություն կարդաց, որի խորագիրն էր «Էկոհամակարգը եւ մարդկային համակարգը»: Դասախոսության ներածական հատվածում տիար Ամիրխանյանը համառոտ անդրադարձ կատարեց բնապահպանական հիմնահարցերին, որից հետո անդրադարձավ արդի համաշխարհային հասարակության եւ բնության միջեւ ստեղծված «փոխհարաբերությանը»: Տիար Ամիրխանյանը հատուկ նշեց, որ բնապահպանական խնդիրները գլխավորաբար առաջանում են կիզակետային չորս դրդապատճառներից՝ համաշխարհային բնակչության գերաճ, մարդկային կյանքի երկարակեցության բարձր ցուցանիշ, նախորդ երկուսից բխող գերսպառումի առաջացում եւ երկրագնդի օգտակար պաշարների արագ քայքայում: Դասախոսը նշեց, որ մարդկանց քանակի մեծացումն իրենից ենթադրում է բնակելի տարածքների, մեքենաների օգտագործման, օգտակար հանածոների սպառման կտրուկ աճ, որի հետեւանքով բնապահպանական ճգնաժամ է առաջանում: Վերջինս հանգեցնում է գլոբալ տաքացման եւ բազում այլ տարերային աղետների: Ամենայն մանրամասնությամբ բերվում էին ցավալի օրինակներ այդ ճգնաժամերից առաջացած հետեւանքներից, որոնք առօրեական եւ պատմական են:

Տիար Ամիրխանյանն իր դասախոսության եզրափակիչ հատվածում առաջարկում էր ապրելակերպի այն տարբերակները, որոնց միջոցով հնարավոր կլինի կանխել բնապահպանական ճգնաժամը եւ բարելավել երկրագնդի բնականոն ընթացքը: Այդ տարբերակները հիմնականում ներառում էին արդյունաբերական աշխատանքների սեղմացման եւ հնարավորին չափ մեղմացման ծրագրերը: Նախատեսվում է կիրառության մեջ մտցնել այնպիսի նյութեր եւ շինություններ, որոնք ինքնուրույն կարող են էներգիայի աղբյուր դառնալ եւ չեն վնասի ոչ բնության սպառվող օգտակար հանածոներին, ոչ քայքայված մթնոլորտին: Մասնավորաբար բնակելի տարածքների համար առաջարկվում է ավելի համեստ վերաբերմունք տարածքի, օդի եւ ջրի նկատմամբ:

Ճեմարանականներն իրենց հարցերի շնորհիվ ավելի հստակեցրին դասախոսության նյութը, քանի որ հարցերը վերաբերում էին Հայաստանի բնապահպանական կարգավիճակին, որի շնորհիվ դասախոսության նյութը դառնում էր առօրեական եւ ավելի դյուրըբռնելի:

Դասախոսությունը դրական ընդունելություն գտավ ճեմարանի սաների կողմից, քանզի բնության մասին հոգ տանելն իր նշանակալի տեղն ունի նաեւ հոգեւոր կյանքում եւ ապրվածաբանության մեջ, իսկ յուրաքանչյուր նոր ծրագիր այդ խնդրի շուրջ երաշխավորում է, որ ապագա հոգեւորականներն իրենց ազգանպաստ քարոզներում մեծ կարեւորություն կտան նաեւ բնության պահպանության հարցին:

ԴԱՎԻԹ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ Ե ԼՍԱՐԱՆԻ ՍԱՆ

Տ. ԱԲԳԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԸ ԺԱՄԱՆԵՑ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Մայիսի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Սոֆիա ժամանեց Բուլղարիայի հայոց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Աբգար վարդապետ Հովակիմյանը: Օդանավակայանում Հայր Սուրբին դիմավորեցին մեծ շուքով եւ ջերմությամբ: Ներկա էին Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Արսեն Սողոյանն իր աշխատակազմով, Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ պրն. Ռուբեն Գրիգորյանը՝ ուղեկցությամբ թեմական խորհուրդի անդամների, Սոֆիայի եւ Պլովդիվի հոգեւոր հովիվներ Տ. Գուսան քահանա Հատավյանը եւ Տ. Գեւորգ քահանա Խաչերյանը, Սոֆիայի եւ Պլովդիվի եկեղեցական հոգաբարձությունների անդամներ, «Երեւան» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Վարդանուշ Թոփաքպաշյանը, «Բարեգործականի ձայն» ամսաթերթի խմբագիր Հռիփսիմե Երնիասյանը եւ այլ անձինք:

Բարի գալստյան ջերմ մաղթանքներով Հայր Սուրբին ողջունեցին դեսպան Արսեն Սողոյանը եւ դոկտ. Ռուբեն Գրիգորյանը: Ի պատիվ առաջնորդական տեղապահի՝ երեկոյան դեսպանատան եւ թեմական խորհրդի կողմից հայկական ճաշարանում ընթրիք կազմակերպվեց, ուր հնչեցին բարեմաղթանքներ եւ բարի ցանկություններ:

Հոգեշնորհ Հայր Սուրբն իր խոսքում Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ նշանակվելու առիթով երախտագիտության խոսք ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ բարձր գնահատանքի եւ վստահության համար: Նա վստահեցրեց, որ Աստծո կամքով եւ հավատավոր հայորդիների աջակցությամբ կանի ամեն ինչ, որպեսզի Բուլղարիո հայոց թեմին վերադարձնի իր պատմական անցյալի փառքը, ինչպես

նաեւ մոտակա ժամանակներում արձանագրվեն նորանոր ձեռքբերումներ ու հաղթանակներ:

Բարի գալուստ շատ սպասելի եւ սիրելի Հայր Սուրբին:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՋԱՄԱՅԿԱՅՈՒՄ

Մայիսի 17-ին Ջամայկայի Կինգսթոն քաղաքում իր աշխատանքներն սկսեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կազմակերպած Միջազգային Էկումենիկ խաղաղասիրական համաժողովը՝ «Ստեղծ փառքը եւ խաղաղությունը երկրի վրա» խորագրով:

Համաժողովի ընթացքում արծարծվելու են հետեւյալ նյութերը՝ խաղաղությունը համայնքների միջեւ, երկրի վրա, շուկայական հարաբերություններում եւ մարդկանց մեջ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս ժողովին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում են ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը, Իրաքի Քրիստոնեական էկումենիկ խորհրդի նախագահ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանը եւ ԵՀԽ Հայաստանյան կլոր սեղանի գրասենյակի գործադիր տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՑ ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայիսի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Դոնի Ռոստով քաղաք, ուր հանդիսապետեց Ս. Հարություն նորակառույց եկեղեցու օծման արարողությունը:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը, Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, Մայր Աթոռի միաբաններ Տ. Մուշեղ վարդապետ Բաբայանը, Տ. Շահե աբեղա Անանյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը եւ Մայր Աթոռի միաբան սարկավագներ: Եկեղեցու օծման արարողությանը մասնակցում էին նաեւ Հայաստանից ժամանած ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանը, ՀՀ տարածքային

Իսթոպ ու նա յուսմիոյվԵ

կառավարման փոխնախարար Վաչե Տերտերյանը, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ, Մայր Աթոռի բարերար Գաբրիել Ջամբարջին եւ գործադիր տնօրեն Լեւոն Սարգսյանը, ՀԲԸՄ երեւանյան գրասենյակի տնօրեն Աշոտ Ղազարյանը:

Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին մարզի հոգեւոր դասը՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի առաջնորդությամբ, մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ՝ գլխավորությամբ Ռոստովի մարզի փոխնահանգապետ Սերգեյ Գորբանի, ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանը, եկեղեցու բարերարներ Սահակ Կարապետյանը եւ Վլադիմիր Ղազարյանը, հայ համայնքի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը, Հարավայի Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը: Վեհափառ Հայրապետին մատուցվեց աղ ու հաց, որից հետո Նորին Սրբությունն ուղեւորվեց նորակառույց եկեղեցի:

Ս. Հարություն եկեղեցին կառուցվել է պատմական Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեղում (կառուցված՝ 1783թ.), որը համայնավարների կողմից քանդվել է 1965թ.: Նոր եկեղեցին կառուցվել է Կարապետյան եւ Ղազարյան ընտանիքների բարերարությամբ՝ ի հիշատակ Սահակ Կարապետյանի վաղամեռիկ որդու՝ Արթուր Կարապետյանի: Եկեղեցու ճարտարապետն է Միխայիլ Սարգսյանը:

Նորակառույց եկեղեցու մատույցներում Վեհափառ Հայրապետին մեծ խանդավառությամբ, ծափողջույններով ու ծաղիկներով դիմավորեցին Ռոստովի մարզի տարբեր կողմերից ժամանած հազարավոր հայորդիներ: Նորին Սրբությունը, ուղեկցությամբ եկեղեցականաց դասի, ինչպես նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ռոստովի եւ Նովոչերկասկի արքեպիսկոպոս Պանտելեյմոնի, հայրապետական իր օրհնությունը բաշխելով հավաքված հավատավոր հայորդիներին, թափորով առաջնորդվեց եկեղեցի, ուր սկսվեց նորակառույց տաճարի օծման արարողությունը:

Հոգեպարար շարականներից եւ աղոթքներից հետո մկրտության Ս. Ավազանից բերվեց մյուռոնաթափ աղավնին, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբալույս մյուռոնով օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը, իսկ Եզրաս, Մովսես, Մարկոս եւ Վրթանես Սրբազանները կատարեցին եկեղեցու տասնվեց այուների օծումը: Օծման արարողությանը հաջորդեց Ս. Պատարագը, որը մատուցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ս. Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը ռուսաստանաբնակ հայորդիներին ուղղեց հայրապետական իր պատգամը: Նորին Սրբությունը փառք եւ գոհություն հայտնեց Աստծուն, որ մի նոր տաճար իր դռներն է բացում հավատացյալների առջեւ. «...Հայոց նոր աղոթավայր է վեր հառնել Ռուսիո օրհնյալ հո-

ղում, որպեսզի այստեղ իրենց ստեղծագործ ընթացքով ապրող հայորդիք անմասն չմնան հայ եկեղեցիներից բաշխվող աստվածային օրհնությունից, առավել զորացնեն հոգեւոր-եկեղեցական կյանքը համայնքի, եւ եկեղեցու շուրջը համախմբումով ամուր պահեն աստվածասիրությունը, ազգային գիտակցությունն ու հայրենանվիրումը»: Հայրապետը հորդորեց ներկա հայորդիներին աներեր պահել հավատը, զորեղ՝ աստվածասեր ու եկեղեցանվեր ոգին եւ պահպանել նախանձախնդրությունն ու հավատարմությունը հայրերի սրբազան արժեքների հանդեպ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավոր գնահատանք հայտնեց եկեղեցու բարերարներ Սահակ Կարապետյանին եւ Վլադիմիր Ղազարյանին: Ս. Հարություն եկեղեցու օծման առիթով Սահակ Կարապետյանին շնորհվեց Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան, իսկ Վլադիմիր Ղազարյանին՝ «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան: Այս առիթով հրապարակվեցին նաեւ Հայրապետական սրբատառ կոնդակները:

«...Այսօր առիթ ունենք բերկրաշատ հոգով ջերմ սիրո եւ գնահատանքի Մեր խոսքը ուղղելու Ձեզ՝ Դոնի Ռոստովում Ձեր հովանավորությամբ կառուցված Սուրբ Հարություն եկեղեցու օծման առիթով, որ կատարեցինք Մեր զավակների հետ միասնական աղոթասացությամբ: Հավատավոր եւ որդեսեր Ձեր հոգու ջերմագին փափագով, ի հիշատակ Ձեր վաղամեռիկ որդու՝ Արթուր Կարապետյանի, կառուցվեց եկեղեցին, որն այսուհետ օրհնություն պիտի բաշխի Ռուսաստանում ապրող Մեր ժողովրդի զավակներին: Հայրենիքում եւ Սփյուռքում մեր հազարավոր վանքերի ու եկեղեցիների պես Սուրբ Հարությունը ծառայելու է Մեր սիրեցյալ ժողովրդի հոգեւոր կյանքի վերազարթոնքին, զորացնելու նրանց հավատարմությունը հանդեպ մեր հայրերի նվիրական ավանդները, մեր սրբազան ժառանգությունը: Ձեր օրհնյալ ընթացքով ու պանծալի գործերով, Դուք բարի օրինակ եք մատուցում հայորդյաց, ովքեր սերնդեսերունդ պիտի գնահատեն Ձեր վաստակը...», - ասվում է տիար Կարապետյանին հանձնված կոնդակում:

«...Երկար տարիներ լինելով Ծխական Խորհրդի Ատենապետ, Դուք ազնիվ հոգով ներդրել եք Ձեր ժամանակը, ջանքերն ու կարողությունները, որպեսզի հաղթահարվեն բոլոր դժվարությունները եւ հայ համայնքը օրհնվի նոր եկեղեցիով: Ձեր երկարամյա, բարի սպասավորությունը եւ ազնիվ ընծայաբերումները հանուն ծուխի բարգավաճման ու եկեղեցու կառուցման արդարորեն բերել են Ձեզ սերն ու հարգանքը թեմի հոգեւոր սպասավորների ու հավատացելոց», - նշվում է Վլադիմիր Ղազարյանին շնորհված հայրապետական կոնդակում:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը բերեց նաեւ տարածաշրջանի իշխանություններին՝ ի դեմս Պատրարագին ներկա փոխնահանգապետի եւ մարզի Օրենսդիր ժողովի նախագահ Վիկտոր Դերյաբկինի, ինչպես նաեւ Ռոստովի եւ Նովոչերկասկի արքեպիսկոպոս Պանտելեյմոնին, ովքեր հայ համայնքի հանդեպ բարյացակամ եւ ուշադիր վերա-

բերմունքով աջակից են համայնքի ազգային-եկեղեցական կյանքի կազմակերպմանն ու նոր ձեռքբերումների կերտմանը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը Օրհնության գիր ընծայեց Դոնի Ռոստովի քաղաքապետ Միխայիլ Զեռնիշովին՝ Սուրբ Հարություն եկեղեցու կառուցման սրբազան գործում բերած վաստակի համար:

Նորին Սրբությունն օծման առիթով նորակառույց եկեղեցուն ընծայեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բերված «Ասպվածամայրը մանկան հետ» նկար:

Ս. Պատարագից հետո Ռոստովի հայ համայնքի կողմից կազմակերպվել էր ճաշկերույթ՝ ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Նույն օրը երեկոյան Վեհափառ Հայրապետն իր ուղեկից շքախմբի հետ վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի միջեւ վաղուց ստեղծվել էին բարեկամական հարաբերություններ: Այդ հարաբերություններն ավելի ամրացնելու եւ ավանդական դարձնելու նպատակով, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչության նախաձեռնությամբ 2011 թվականի մայիսի 29-ին, կազմակերպվել էր դասական երաժշտության երեկո: Երեկոյի կիզակետում հայտնվել էր կոնսերվատորիայի ավարտական լսարանի դաշնակահարուհի՝ Մարիամ Խառատյանը: Տաղանդավոր օրիորդն առաջին անգամ չէր հյուրընկալվում ճեմարանում եւ ոգեւորությամբ նշեց, որ նման լսարանում հանդես գալն իր համար մեծ պատիվ է: Այս անգամ դաշնակահարուհին կատարեց Բախի «Պրելյուդ եւ Ֆուգա»-ն (դո դիեզ մինոր), Բեթհովենի «32 վարիացիաներ»-ը, Լիստի «Դանթե ընթերցելուց հետո» սոնատ-ֆանտազիան, Բերգի «Սոնատ»-ը եւ Ռախմանինովի երկու «Պրելյուդ»-ները (սի մինոր եւ սոլ դիեզ մինոր):

Գեղեցիկ հանդիսության ավարտին ճեմարանի ավարտական լսարանի սան Վարդան սարկավագ Ասլանյանը, ուսանողության եւ տեսչության անունից երախտիքի խոսք ուղղեց երիտասարդ դաշնակահարուհուն: Բարեշնորհ սարկավագը նշեց, որ արվեստի միջավայրի եւ հոգեւոր դաշտի միջեւ գոյություն ունի խաչվող մի կետ, որը երկրային ներդաշնակությունն է եւ տաղանդավոր դաշնակահարուհուն հաջողվեց դրսեւորել այդ ներդաշնակ մթնոլորտի մի մասը:

Մարիամ Խառատյանի հետ Գեւորգյան ճեմարան էր ժամանել նաեւ կոնսերվատորիայի դասախոս, դոցենտ՝ Արեգ Սարգսյանը: Պատվարժան դասախոսը

շնորհակալություն հայտնեց ճեմարանի տեսչությանը գեղեցիկ նախաձեռնության համար եւ շեշտեց, որ նմանատիպ արարողությունները նպաստում են Հայաստանում մշակութային կյանքի վերելքին եւ արվեստի զարգացմանը: Դասախոսի պատկերացումով հոգեւոր կյանքն ու արվեստը սերտ փոխհարաբերության մեջ են եւ մասնավորաբար՝ արվեստը հոգեւոր կայնքի մարմնացած դրսեւորումներից է: Պարոն Սարգսյանը նշեց, որ մեր օրերում պահանջ է զգացվում հայ արվեստի հսկաների անունները նորովի մեծարելու ու մատուցելու: Լինելով երաժշտության ասպարեզի ներկայացուցիչ՝ պարոն Սարգսյանն արվեստը չի կաղապարում միայն այդ միջավայրի մեջ, այլ բարոյական եւ հոգեւոր կայնքի յուրաքանչյուր դրսեւորում համարում է արվեստի մասնիկ:

Երեկոյի կենտրոնական անձը՝ շնորհուկակ Մարիամ Խառատյանը, մեծ ոգեւորությամբ էր կիսում իր տպավորությունները եւ մասնավորաբար նշում, որ ճեմարանական լսարանը նպաստավոր պայմաններ է ապահովում երաժշտությունը ճիշտ զգալու եւ հաղորդելու համար: Նա իր կայնքը չի պատկերացնում առանց երաժշտության եւ համեստությամբ նշում է, որ երաժշտությունն իր համար ամենից առաջ կոչում է եւ ինքնարտահայտման յուրահատուկ միջոց: Մարիամ Խառատյանն իր դիրքը երժշտության մեջ խոնարհաբար դասում է վերջին շարքերում եւ շեշտում, որ այդ դաշտում նա դեռ շատ սովորելու տեղ ունի: Դանշակահարուհին նշեց, որ երաժշտությունն արվեստից դուրս ստանձնում է դաստիարակի դեր ու նշանակություն, եւ դրա միջոցով հնարավոր է մարդկանց սրտերում բորբոքել հոգեւոր կայնքի նկատմամբ մեծ սեր եւ բարոյական գիտակցություն: Այնուհանդերձ, տաղանդավոր օրիորդը երաժշտության աշխարհում որոշակի պարբերացումներ է տեսնում: Այդ պարբերացումները դրսեւորվում են վերացական զգայության մակարդակում եւ յուրաքանչյուր մաս մարդու մեջ արթնանցում է առնաձնահատուկ ընկալում: Այս ընկալման միջավայրում Մարիամ Խառատյանը զանազանում է հայ եւ արտասահմանյան հեղինակների աշխատությունները: Այդ զանազանումները գլխավորաբար արտահայտվում են աշխարհայացքի մակարդակում. արտասահմանի հեղինակներն արտահայտել են տարերային իղձեր եւ զգացմունքեր, իսկ հայ հեղինակների գործերում շոշափելի է ազգային վշտի եւ լուսավոր գալիքի ակնկալության գաղափարը: Մարիամ Խառատյանը Գեւորգյան հոգեւոր ճեմարանում կրկին հանդես գալու ցանկություն հայտնեց եւ խոստացավ ավելի բազմաբնույթ երաժշտացանկ մատուցել:

Տեսչության ջանքերով կազմակերպած միջոցառումների շնորհիվ ճեմարանը պահպանում է իր ազգանվեր կոչման առաքելությունը, քանզի հայ հոգեւորականը դարեր ի վեր ջանացել է կերտել իր ազգի ոչ միայն հոգեւոր դիմագիծը, այլ նաեւ ամուր մշակութային հող է ստեղծել ազգիս բարեկարգության համար:

ԴԱՎԻԹ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ Ե ԼՍԱՐԱՆԻ ՍԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 30-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, որ հրավերով Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ժամանել է Հայաստան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ մասնակցելու Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի անդրանիկ նիստին:

Առավոտյան օդանավակայանում Արամ Ա Կաթողիկոսին դիմավորեցին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Գեւորգյան ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ վարդապետ Սարոյանը, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ վարդապետ Բաբայանը եւ Տ. Կյուրեղ աբեղա Դավթյանը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Արամ Ա Կաթողիկոսին դիմավորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որից հետո միաբանների թափորն Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին առաջնորդեց Մայր Տաճար, ուր կատարվեց գոհաբանական աղոթք: Ապա Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը ողջույնի խոսք ուղղեց Արամ Ա Կաթողիկոսին: «...Փառք ենք տալիս երկնավոր մեր Տիրոջը, որ պարբերաբար առիթներ է ընծայում մեզ՝ հանդիպելու, միասին քննարկելու մեր ազգին, մեր Եկեղեցուն հուզող հարցեր ու նաեւ համատեղ աղոթք բարձրացնելու առ Աստված մեր ժողովրդի, մեր հայրենիքի բարօրության համար», - ասաց Նորին Սրբությունը՝ վստահություն հայտնելով, որ համատեղ հանդիպումներն ու աղոթքները, միասնական հորդորն ու պատգամը խրախույս եւ քաջալերանք են հայ ժողովրդի հավատավոր զավակների համար՝ առավել նախանձախնդրորեն փարվելու մեր հայրերի սուրբ հավատքին եւ շենացնելու Առաքելական սուրբ եկեղեցին: Վերջում Նորին Սրբությունը, վերստին բարի գալուստ մաղթելով Արամ Ա Կաթողիկոսին, վերջինիս հրավիրեց Միածնաէջ տաճարում իր հորդորն ու պատգամը բերելու ներկա հավատացյալներին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությանը:

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, ուրախություն հայտնելով Սուրբ Էջմիածնում գտնվելու համար, մասնավորաբար նշեց. «Գոհություն ու փառք ենք տալիս Աստծուն, որ ահավասիկ մեկ անգամ եւս այս հոգեպարար առիթն ընծայեց լինելու Սուրբ Էջմիածնի խորախորհուրդ կամարների ներքո, ուր դարեր շարունակ մեր պապերը աղոթել են եւ իրենց հոգեմտավոր ստեղծագործությամբ մեր ժողովրդի կյանքը բարձրացրել եւ պայծառակերպել: Ամեն անգամ, երբ գտնվում եմ Հա-

յաստանի հողի վրա, Սուրբ Էջմիածնի խորհուրդի մեջ, մի քիչ ավելի եմ զորանում իմ հոգեւոր առաքելությանս մեջ, որովհետեւ Ս. Էջմիածինը պատկանում է ամբողջ հայությանը, Հայաստանը պատկանում է ամբողջ հայությանը: Մեր հայրենիքը մեկ է, մեր Եկեղեցին մեկ է, մեր մշակույթը մեկ է, որովհետեւ մեր ժողովուրդը մեկ է: Այս միասնական ոգին մենք պետք է ավելի ամրապնդենք»: Արամ Ա Հայրապետն անդրադարձավ նաեւ Եկեղեցու, ազգի եւ հայրենիքի միասնականության առավել հզորացմանն ու ժողովրդի կյանքում Եկեղեցու առաքելության ընդլայնմանն ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միասնական ջանքերին: Արամ Ա Կաթողիկոսը խոսեց նաեւ Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դրան ի խնդիր Հայոց Եկեղեցու կողմից գործադրվող ջանքերի մասին: Խոսքի ավարտին Արամ Ա Հայրապետը հայցեց Բարձրյալին՝ միշտ պայծառ պահել Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ պարգեւելով բազում ազգաշեն, եկեղեցաշեն իրագործումներ:

Նույն օրը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը մասնակցեցին Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի անդրանիկ նիստին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերջին շրջանին հայաստանյան լրատվամիջոցները անդրադարձան Ֆրանսիայի հայոց թեմի Նիսի եկեղեցական համայնքում տեղի ունեցած իրադարձություններին: Որոշ հրապարակումներում, սակայն, ակնհայտորեն փորձ էր արվում հասարակությանը ապատեղեկացնել եւ Նիսի համայնքում տիրող իրավիճակը արհեստականորեն ներկայացնել օրհասական եւ մտահոգիչ:

Մասնավորաբար՝ «Nouvelles d'Armenie» պարբերականի armenews.com կայքում հրապարակված Նիսի նախկին ծխական խորհրդի հայտարարությունը, որը թարգմանաբար ներկայացված է նաեւ news.am հայաստանյան կայքում՝ «Վիթխարի սկանդալ Հայ Առաքելական Եկեղեցու Ֆրանսիայի հայոց թեմում» խորագրով, բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Հայտարարության մեջ փորձ է արվում Ֆրանսիայի հայոց թեմը ներկայացնել «ճգնաժամային եւ տագնապահարույց» իրավիճակում:

Այսու հաստատում ենք, որ Ֆրանսիայի հայոց թեմը բացարձակապես ճգնաժամային եւ տագնապահարույց իրավիճակում չէ: Թեմը բնականոն եւ խաղաղ պայմաններում շարունակում է իր հոգեւոր, մշակութային եւ ազգային արժեքների պահպանման առաքելությունը ֆրանսահայության կյանքում՝ հակառակ որոշ ուժերի եւ անձերի հարուցած խոչընդոտների, որոնք թեմի հաստատման առաջին իսկ

Բարիգալսպյան արարողության ժամանակ

օրերից շարունակում են ապակայունացնել ֆրանսահայության թեմական դրությունը:

Հորդորում ենք Նիսի եկեղեցական նախկին վարչության անդամներին դադարեցնել իրենց ավերիչ գործունեությունը եւ հայ հանրությանը ապատեղեկացնելու փոխարեն՝ նպաստել Նիսի հայ հավատացյալների հավաքական կյանքում հոգեւոր առողջ մթնոլորտի ձեւավորմանը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱԽԱԿԱՅՎՈՒՄ Է Տ. ԱԲԵԼ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ մայիսի 10-ից կախակայվում է Տ. Աբել քահանա Մանուկյանի քահանայագործությունը դրսեւորած կարգազանց ընթացքի՝ Շվեյցարիայում հաստատված կանոնական թեմի իրողությունը մերժելու, նշանակված առաջնորդական տեղապահի եւ Ժնեւի Սուրբ Հակոբ եկեղեցու հովվի հանգամանքը չճանաչելու եւ Մայր Աթոռ ներկայանալու Հայրապետական հրահանգները չկատարելու համար:

Աբել քահանային հրահանգվել է մեկշաբաթյա ժամկետում ներկայանալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Վանական Խորհրդին:

Տեղեկացնենք, որ կախակայման ընթացքում կարգազանց եկեղեցականին արգելվում է կատարել ծիսապաշտամունքային որեւէ արարողություն, հակառակ պարագային կատարված արարողությունն անվավեր է: